ԵՐՋԱՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ
Բանասիրության դոկտոր

ԾԱԾՈՒԿ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱՍՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Գործնական շփումների ժամանակ, որոշակի դէպքերում, անհրաժեշտութիւն է լինում ինչ-որ իրազեկում հասցնել ներկաներից միայն մէկին, երբեմն մի քանիսին կամ բոլորին դիմելիս հաղորդել անհրաժեշտ իրազեկման մի մաս՝ մնացածը թողնելով իբրեւ ենթատեքստ՝ ծածուկ մի բան: Այս երկու նպատակով հասցէագրողն իրար է զուգակցում հնչիւնական ու շարժումային լեզուները՝ առաջինով արտայայտելով այն, ինչ պէտք է ասել ի լուր ամենքի, իսկ երկրորդով այն՝ ինչ առանձնացնում է ոմանց համար կամ որպէս ենթատեքստ: Հաշուի է առնում, որ համապատասխան բնոյթի եւ անհրաժեշտ ձեւով կատարուող շարժոյթները (կինեմա) ընկալելի եւ նկատելի են պահին յարմար հասցէատիրոջ կողմից եւ կամ ամենքի կողմից ընդունւում են իբրեւ ինչ-որ գաղտնիք, որը, սակայն, բարձրաձայն չի ասուել:

Ծածուկ իրազեկման շարժոյթները իմաստաբանական մի բնորոշ առանձնայատկութեամբ տարբերւում են բոլոր միւս՝ բացայայտ իրազեկման շարժոյթներից: Վերջիններս ունեն որոշակի իմաստներ՝ արտայայտելով գաղափար, յոյզ, զգացում, այսինքն՝ որեւէ հասկացութիւն, յատկանիշ, գործողութիւն եւ այլն: Յայտնի է, ասենք, որ բթամատն ու ցուցամատն իրար շփել շարժանքը նշանակում է փող, ուսերը թօթուելը՝ տարակուսանք, ճակատը կնճռելը՝ մտահոգութիւն, շրթունքները կրծելը՝ բարկութիւն, ափերն իրարից փոքր-ինչ հեռու պահելը՝ նեղ, բութ մատը վեր բարձրացնելը՝ լաւ, հրաշալի, եւ այլն, եւ այլն: Ծածուկ իրազեկման շարժոյթներին այսպիսի որոշակի իմաստներ չեն ամրակայուած: Թէ իւրաքանչիւր դէպքում ինչ է ցանկանում ասել շարժասողը (ժեստիկուլեացիա կատարողը) հաղորդակցին, յայտնի է դառնում միայն տուեալ իրավիճակում, նրանից, թէ ինչպիսին են հաղորդակցման պայմանները, ինչ է կատարւում խօսելու պահին, ինչ է խօսակցութեան նիւթը, ում է այն վերաբերում եւ այլ հանգամանքներ ու մանրամասներ: Արդ, ընդհանուր կարգով նշենք, ինչ է հաղորդւում ծածուկ իրազեկման շարժոյթներով: Ամենից յաճախ՝ զգուշացում՝ դադարեցնելու այս կամ այն գործողութիւնը եւ կատարել ուրիշ, որոշակի պայմաններում միանգամայն հակառակ բան: Շարժասողը հաղորդակցի ուշադրութիւնը հրաւիրում է որեւէ վճռորոշ հանգամանքի վրայ, հասնում է ինչ-ինչ պայմանաւորուածութեան, կանխում, որ բանաւոր ասուածն ընկալուի այլ կերպ, յաճախ հակառակ իմաստով: Նա նաեւ իր եզրակացութիւնը, դրական կամ բացասական, վերաբերմունքն է արտայայտում իրողութիւնների վերաբերեալ, կատարում մտքերի փոխանակում հիմնականի մասին: Վերջապէս, ինչպէս ասուեց, կիսապ է մնում բանաւոր խօսքը՝ ծածուկը՝ ենթատեքստը, լրացնում է շարժասութեամբ, ամենաընդհանուր իմաստով, ուրեմն՝ պակաս պատասխանատուութեամբ, քանի որ բարձրաձայն ոչինչ չի ասուել: Անշուշտ, անհրաժեշտ հասցէատիրոջից բացի իրազեկումն

ուրիշի կողմից ընկալուելու դէպքում, խախտում է ծածուկ լինելու, նեղ շրջանին վերաբերելու պայմանը, հետեւում է համապատասխան արձագանք: Այս ամենը մենք դեռ կը տեսնենք յօդուածի յետագայ շարադրանքում, գեղարուեստական գրականութիւնից մէջբերուած օրինակներում: Սոյն յօդուածում մեր նպատակն է վեր հանել ժողովրդի մէջ ընդունուած ծածուկ իրազեկման շարժոյթները, քննել դրանց կատարման բնոյթը եւ արտացոլումը հայոց հնչիւնական լեզուում:

Ներկաներից առանձնացրած, անհրաժեշտ հասցէատիրոջն ինչ-որ բան հաղորդելու համար շարժառողը դիմում է իւրայատուկ շարժանքների ու դիմաշարժերի: Դրանք, որոշակի իմաստ չունենալով հանդերձ, միանման են իրենց իմաստաբանական ընդհանրական բնոյթով ու ծածուկ կատարման յատկանիշով: Այս առումով էլ դիտւում են իբրեւ հոմանիշներ, իսկ դրանց բազմազանութիւնն առաջ է եկել տարբեր իրավիճակներում հաղորդակցուողների նոյն իրազեկման նպատակն ունենալուց. որոշ պայմաններում աննկատելիութիւնն ապահովւում է մի կերպ, երկրորդներում՝ այլ կերպ, երրորդներում՝ մի ուրիշ կերպ. որոշ դէպքերում բաւարար է կատարել մի շարժոյթ, ուրիշ դէպքերում այլ՝ աւելի ներգործուն շարժոյթ եւ այլն: Խնդրոյ առարկայ հոմանիշային շարքը մենք քննութեան կ՛առնենք բաժանելով շարժասական (ժեստիկուլեացիոն) խմբերի՝ ելնելով այն սկզբունքից, թէ ինչ պատճառով եւ ինչպէս են կատարւում տուեալ պահին պահանջուող շարժոյթները: Նախ, ինչպէս կը տեսնենք, շարժոյթների փոքր մասը կատարւում է առանց հաղորդակցուողների անմիջական ֆիզիկական շփման, շարժոյթների մեծ մասը՝ հաղորդակցուողների անմիջական, ֆիզիկական շփմամբ:

Այսպեղից էլ հոմանիշային շարքը կը բաժանենք երկու խմբի, որոնց վրայ կը ծանրանանք առանձին-առանձին:

1. Առանց անմիջական շփման շարժոյթներ: Հաղորդակցուողներն այս շարժոյթները կատարում են լինելով միմեանցից որոշակի տարածութեան վրայ, առանց միմեանց մարմնամասերի վրայ ներգործելու: Դրանք երկուսն են՝ աչքով անել եւ ունքով անել: Հասցէատիրոջից բացի ուրիշների կողմից աննկատելի լինելը պայմանաւորուած է դիմախաղային բնոյթով, խիստ փոքր ծաւալի, յաճախ հազիւ նշմարելի շարժումներով, որոնք ընկալւում են շարժառողին յատկապես ուշադիր յետեւելու, նրանից ամեն վայրկեան նոր իրազեկում սպասելու դէպքում:

Աչքով անել դիմախաղին դիմելիս՝ շարժառողը փակում, կամ պակաս նկատելի լինելու համար կիսով չափ է փակում մի աչքը՝ հայեացքն ուղղելով հասցէատիրոջը: Շարժոյթը համապարած գործածութիւն ունի, ուստի եւ բազմազանութեամբ արտացոլուած է հայոց լեզուում: Նկարագրող բառակապակցական կառոյցների գլխաւոր անդամը, իհարկէ, աչք գոյականն է՝ գրեթէ միշտ դրած ուղղական կամ գործիական յոլովներով, որի հետ հանդէս են գալիս այլեւայլ բայեր՝ նայած ինչպէս է աչքի շարժումը ներկայացւում:

Անդրադառնանք, ուրեմն, արտացոլման պատկերին: Որոշ բառակապակցութիւններում նշւում են դիմախաղի մանրամասներ: Այսպիսիք են՝ աչքի մէկը խփել, մի աչքը խփել, մի աչքը փակել: Օրինակներ. «Լեւոնեանը ներկայացրեց Չարենցին. - Ծանօթացիր Վարսենիկի հետ: Չարենցն... ձեռքը մեկնեց: Ուզեցի ասել, որ մենք վաղուցուայ ծանօթներ ենք, սա-

կայն Չարենցը **մի աչքը թեթեւ փակելով զգուշացրեց**, որ ինձ ձեւացնեմ անծանօթ»[1]: ««Անառակ կնոջ» փոխարեն «Մարիցա» էին ասում... օրինակի համար՝ մէկը հարցնում էր. - Ո՞ւրտեղաց, միւսը պատասխանում էր **մի աչքը փակելով**. - Մարիցայի մօտէն»[2]: «Շատ գեղեցիկ է, - ասացին միմեանց յետեւից մի քանիսը: - Գեղեցիկ լինելը գեղեցիկ է, բայց ի՞նչ անես, որ... -պատասխանեց Սերգէյ Իւանիչը **աչքի մէկը խփելով** ... - ամեն օր նուէրներ, հօրը եւ եղբօրը պաշտօն՝ լաւ ռոճիկներով...»[3]: «Սեթօ, ո՞ւրտեղ ես աշխատում,- հարցրեց Կարօն, -արի մեզ մօտ. արի՛, չես փոշմանի,- **մի աչքը նկատելի կկոցելով** ասաց նա: - Ճի՞շտ, ձեզ մօտ աշխատելն աւելի հաշիւ ա՞...»[4]:

Շատ ավելի մեծ թուով բառակապակցութիւններում նշում են շարժման նրբերանգները՝ բազմազան բայերի միջոցով, աչքը բացիտիել, աչքը թարթել, ապա նաեւ. աչքը հպել, աչքը ճթել, աչքը ճպել, աչքը ճրթել (**ճրթացնել**), եւ կամ. աչքը կծկել, աչքով կծկում մը ընել: «Անծանօթը գլխով արեց, թէ այո, իսկ երիտասարդ հովիւը... անկատելի **ճթեց աչքը**. օգնականին ուզում էր ասել, թէ միամիտ մի լինիր»[5]: «Յանկարծ կողքի քէֆչիներից մէկը դարձաւ դէպի մեր տնտեսվարը.- Տօ, ի՞նչի մի տեսակ նայեցիր կնկաս, ու **աչքդ ճրթցրիր: - Ճրթցրի՞**, այ մարդ: -**Ճրթցրի՛ր**: -**Չճրթցրի՛**: Գինու շիշը թռաւ դէպի մեր սեղանը»[6]: «Նորից տանուտերի **աչքը ճպաց**, զգիրը վազեց Մելիքենց տունը, մի պղինձ վերցրեց ու վաճառ է հանում»[7]: «**Աչքովը թեթեւ կծկում մը ըրաւ ընկերոջը**, «տեսա՞ր» ըսել կուզէր կարծես...»[8]: Եւ մի երրորդ կարգի բառակապակցութիւններում էլ կայ ակնարկ դիմաշարժի մասին՝ առանց շարժման բնոյթը նշելու, աչքով նշան անել, աչքով նշանացի անել, աչքով նշմար տալ: «Տեսայ, որ նրա զրպաններից մէկը մի տեսակ պարում է: Թումանեանին **աչքով նշան արի**: Նա փոթկաց եւ ձեռքը տանելով Պոչեանի զրպանը, այնտեղից դուրս բերեց մի թղթէ տոպրակ՝ ցօցիալ ձկներով լի»[9]: «Ինչ... Ուսպան Հայաստա՞ն կ՛ուզէ երթալ: - Չէ, Մարուք ջան,- իսկոյն վրայ եկաւ Ուսպան ծածկելու համար եւ **աչքով նշմար տուեց** Յարութին, որ զոցէ: - Չէ, էնպէս ըսի,- խօսեց Յարութը»[10]: Սակայն թէ՛ այս, թէ՛ նախորդ կարգի բառակապակցութիւնների հետ համեմատած գործածութեան ամենամեծ յաճախականութիւնն ունի աչքով անել (արեւմտահայերէնում՝ աչք ընել յարադիր բայը. «Բեմի յետեւ եկաւ մի բարձրատրիճան պետ... Լաւ է, բայց այսինչ, այսինչ տեղերը պէտք է հանել: Ես փորձեցի առարկել, բայց Աճեմեանը **աչքով արեց, որ լռեմ**: Յետոյ բացատրեց...»[11]: «Այո,- հաստատեց Վարդանեանը,- չեմ ցանկանում շրջանից բաց թողնել այնպիսի փորձուած ու հմուտ դեկաւարի, ինչպիսին Հասրաթեանն է: Գարեգինը քմծիծաղեց եւ **աչքով արեց Ռուբէնին**: Սա հասկացաւ նրա միտքը, նոյնպէս քմծիծաղեց»[12]: «Լուսացարարուհին... **աչք ըրաւ** ծերու-

1 «Յուշեր Եղիշէ Չարենցի մասին», Երեւան, 1986:
2 **Վահան Թոթովենց**, Կապոյտ ծաղիկներ, Երեւան, 1972:
3 **Շիրվանզադէ**, Խնամատարը, ԵԺ, Երեւան, հ.1, 1986:
4 **Անահիտ Սահինեան**, Խաչուդիներ, Երեւան, 1962:
5 **Վազգէն Տալեան**, Մինչեւ լուսաբաց, Երեւան, 1987:
6 **Վիկտոր Բալայեան**, Երկեր, Ինչպէս անցկացրի, Երեւան, հ. 2, 1981:
7 **Պերճ Պոչեան**, ԵԺ 7 հատորով, Յեցեր, Երեւան, , հ. 3, 1963:
8 **Լեւոն Շանթ**, Երկեր, Դարձ, Երեւան, 1989:
9 **Շիրվանզադէ**, ԵԺ 5 հատորով, Կեանքի բովից, Երեւան,, հ. 5, 1988:
10 **Աւետիք Իսահակեան**, ԵԺ 6 հատորով, Ուսպա Կարօ, Երեւան, հ. 4, 1975:
11 **Վազգէն Դաւթեան**, Ջուգահեռ ճանապարհ, 1976:
12 **Սերօ Խանզադեան**, ԵԺ 5 հատորով, Հողը, Երեւան, հ. 2, 1967:

նի նաւավարին, որ լուացքի մասին խօսի երիտասարդ ձկնորսի հետ»[13]: «Խօսակցութիւնը քիչ մըն ալ կ'երկարի: Սակայն **էֆենտի աչք կ'ընէ կնոջը, որ խօսքը կարճ կապէ**, տէր Բարսեղ ուրքի կ'ելլէ»[14]:

Երկրորդ շարժոյթն է՝ յօնքը շարժել: Ի տարբերութիւն նախորդի, այս դիմախաղն ունի շարժասական տարբերակներ. յօնքի խիրաքանչիւր ցնցում, կծկում, ամեն շարժուածք՝ ուղղուած հասցէատիրոջը, նշանակում է, թէ ինչ-որ միտք է հաղորդւում ու պէտք է համապատասխան կերպով արձագանքել: Սա է պատճառը, որ դիմաշարժն արտացոլող բառակապակցութիւններն ընդհանրական բնոյթ ունեն, այսինքն՝ միայն ակնարկում են յօնքին դիմելը, առանց որոշակի շարժման նկարագրութեան՝ յօնքի շարժումով (շարժմունքով) նշան տալ, յօնք խաղացնել, յօնքով անել: Օրինակներ. «**Իր յօնքի շարժմունքով նշան տուեց** եւ շարունակեց խօսել Մարօյի հետ: Ես հասկացայ, նա ինձ զգուշացրեց, որքան կարելի է ինձ հեռու պահեմ նրանից, որովհետեւ նրա մօտ կանգնած էր իր մօրաքոյրը»[15]: Նոյնը՝ ունք հոմանիշով փոխարինուած լինելու դէպքում. ունքով ընել, ունքով անել, ունօք անել: «**Ունօք արաւ, որ սենեակից դուրս գամ**»[16]: Պէտք է նշել, որ յօնքերի այս բազմապիսի շարժումները սովորաբար զուգակցւում են աչքերի նոյնքան բազմապիսի շարժումների հետ, իբրեւ իրազեկման միջոցներ, տարրեր: Ուստի երկու մարմնամասերով կապարւող այս տարբերակների շարքը դիտում ենք որպէս ամբողջութիւն ու ներառում մէկ շարժոյթի մէջ: Բառակապակցութիւններում այժմ մատնանշւում է երկու մարմնամասերին դիմելու պարագան՝ աչքով-ունքով անել, աչքով- ունքով հասկացնել: Ճիշտ է, այսպիսի կառոյցները ենթադրում են նաեւ համալիրներ, որոնց մէջ ընդգրկւում են նաեւ աչքով եւ յօնքով կապարւող բացայայտ, որոշակի իմաստով տարբեր դիմաշարժեր: Բոլոր դէպքերում նման համալիրները կատարւում են աննկատելի, ծածուկ իրազեկման նպատակով: Օրինակներ. «Թումանեանը փոքր-ինչ ուղղուեց անկողնում եւ ոգեւորուած շարունակեց: - .... Բանաստեղծին խնամող Նուարդը մեզ **աչքով-ունքով էր անում, որ կարճ կապենք**: Այդ պատճառով էլ ստիպուած եղանք հրաժեշտ տալու»[17]: «Աղջիկը առաջարկեց հինգռուբլիանոց: ... Ու որքան էլ աղջիկը պնդեց, ընկեր տղաները **աչքով-ունքով հասկացրին, որ վերցնի** - չեղաւ: Լեւոնը դարձեալ չվերցրեց»[18]: «Նկատեցի, որ հենց քէֆի սկզբից նա ուշադիր յետեւում էր Չարենցին, ... **աչքով-ունքով հասկացնում**, որ չստիպեմ նրան չափից աւելի խմել, հասկացնում, որ Չարենցի ցաւաթը կիսատ լցնեմ»[19]: Եւ կամ՝ ի նշան դիմաշարժի սերտ ամբողջութեան՝ աչք-ունքով անել, աչքունքով հասկացնել. «... շատերին էլ հայա դարի կուտան: Քեռին **աչք-ունքով էր անում նրան, որ բան չասի**, եւ Պօղոսը լռում է»[20]: «Յարութը վրայ հասաւ, **աչքունքով հասկացրեց հօրը, որ լռի**, սակարկեց, վաճառեց ոչխարը»[21]: «Հեղինեն պատմում էր, որ Աղամեանի հետ բեմի վրայ խաղալու ժամանակ ինքը այնքան էր տարւում

13 **Երուխան**, Նովելներ, Լուացարարուհին, Երեւան, 1965:
14 **Երուանդ Օտեան**, Միջնորդ տէր պապան /Ա.տ. եւ թ./:
15 **Րաֆֆի**, ԵԺ 10 հատորով, Կայծեր, Երեւան, հ. 5, 1956:
16 **Ստ.Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, Երեւան հ. 4, 1945:
17 **Ծերուն Թորգոմեան**, Հոգեթով յուշեր, Թբիլիսի, 1975:
18 **Ստեփան Զօրեան**, ԵԺ 10 հատորով, Զկնորս Լեւոնը, Երեւան, հ. 2, 1960:
19 **Վախթանգ Անանեան**, ԵԺ 6 հատորով, Բակունցի հետ, Երեւան, հ. 4, 1970:
20 **Յարութիւն Մկրտչեան**, Անյայտ զինուորի յիշատակարանը, Երեւան, 1980:
21 **Մուշեղ Գալշոյեան**, Մարութայ սարի ամպերը, Ներսէ, Երեւան, 1983:

նրա խաղով, որ յաճախ մոռանում էր իր դերը, իր ասելիք բառերը, եւ Ադամեանը ստիպուած էր լինում **աչքունքով հասկացնել նրան**, սթափեցնել»[22]:

2. ***Անմիջական շփման շարժոյթներ***: Քննուող հոմանիշային շարքի շարժոյթների մեծագոյն մասը մտնում է այս խմբի մէջ: Բոլորն էլ շարժանքներ են: Ծածուկ իրազեկումը հաղորդելու համար շարժասողն անմիջականօրէն շփւում է հաղորդակցի հետ՝ մի քանի եղանակներով ներգործելով նրա մարմնամասերի վրայ: Հստակ ու տարբորոշուած քննութեան համար, ըստ այդ եղանակների, խումբը կը բաժանենք ենթախմբերի:

ա. ***Սեղմում***: Ծածուկ իրազեկումը հաղորդելու համար հասցէագրողը սեղմում է հասցէատիրոջ որոշակի մարմնամասը՝ դրանք ընտրելով իրավիճակին համապատասխան՝ ելնելով հաղորդակցումն աննկատ դարձնելու նպատակայարմարութիւնից: Առաջին շարժոյթն է ազդրը սեղմել, որ յարմար է կատարել սեղանի շուրջը նստած ժամանակ՝ սեղանի տակ: Շարժանքն ունի իր երկրորդ տարբերակը՝ ծունկը սեղմել: Նկարագրող բառակապակցութիւններում մատնանշւում են սեղմելու մանրամասները՝ ձեռքով, մատներով, մատների ծայրերով, այսպիսով ունենում ենք. ձեռքով ազդրը սեղմել, ձեռով ծունկը սեղմել, ձեռով ոտքը սեղմել, մատների ծայրով ծունկը (ոտքը) սեղմել, մատներով ծունկը սեղմել: Ինչպէս. «Բէկեանը մի երկու անգամ սեղմեց նրա ազդրը եւ ականջին շշնջաց. - Դու ճիշտ ես, դու ճիշտ ես, եթէ սրանից յետոյ նման բան լինի, ամբողջովին քեզ կը լսեմ»[23]: «Դիւիգիայի հրամանատարի գլխին ասես ծանր մուրճով հարուածեցին, նա ուզեց գոռալ. «Լռի՛ր, դու ո՞վ ես, որ...», բայց շտաբի պետը **սեղմեց նրա ազդրը: Նա իսկոյն զգաստացաւ**»[24]: «Ռուբէնի վերջին խօսքերի վրայ Արփիկի կատաղութիւնը եկաւ, նա գլուխը վեր բռնեց եւ ուզում էր պատասխանել, բայց Ասքանազեանը նրա **ծունկը սեղմեց ու հասկացրեց լռել**»[25]: «Ոգեւորութեան մէջ էր Աւագեանը, հէնց որ Տիգրանն իր տեղը գրաւեց, նա **ամուր սեղմեց նրա ծունկը՝ ի նշան հաւանութեան»[26]:**

Աննկատ լինելու համար առաւելապէս սեղանի տակ է յարմար կատարել նաեւ հաջորդ շարժոյթը՝ ոտքով մէկի ոտքը սեղմել: Շարժասողը ոտնաթաթի ծայրը դնում է հաղորդակցի ոտնաթաթի ծայրին ու երեսի կողմից սեղմում այն դէպի ցած: Արտացոլող բառակապակցական կառոյցներում գերակայ անդամը, իհարկէ, ոտք բաղադրիչն է, որ հանդէս է գալիս ամենուրէք: Հիմնական բայական անդամներն են՝ կոխել, տրորել, բայց ամենից յաճախ՝ սեղմել. ոտքը կոխել, ոտքը տրորել, ոտքը սեղմել: Օրինակներ. «Ում մօտ ինչ խօսելդ չես իմանում, տասն անգամ **ոտքդ կոխեցի**, ոսպն քարոտ է, ասի, բայց դու՝ հեչ, լեզուիդ էիր տալիս»[27]: «Կեսօրը սողցում էր երեխաների սառած ձայներով: -Փադիշարմրզ յաշա, յաշա... Մ'այն 11-12 տարեկան մի տղայ պապանձուել էր... Տողքի տղան, որ աւելի տարեց էր, **ուժեղ տրորեց նրա ոտքը...նորից տրորեց ոտքը**: - Գոռա, կսատկացնեն: - ... Շան անունը չեմ տայ...»[28]: «Բժիշկը շարունակում էր կարդալ, ... իսկ Չարենցը մէկ էլ դառնում էր ինձ

22 **Երուանդ Շահազիզ**, Յիշողութիւններ եւ դիմաստուերներ, Երեւան, 1980:
23 **Քրիստափոր Թափալցեան**, Ոսկէ հովիտ, Երեւան, 1955:
24 **Քրիստափոր Թափալցեան**, Պատերազմ, Երեւան, հ. 3, 1959:
25 **Պերճ Պռոշեան**, ԵԺ 7 հատորով, Սկիզբն երկանց, Երեւան , հ. 4, 1963:
26 **Քրիստափոր Թափալցեան**, Հայրենաշէն, Երեւան, Գ 1-2, 1963-1973:
27 **Ա. Սուքիասեան, Ս.Գալստեան**, Հայոց, լեզուի դարձուածաբանական բառարան, Երեւան, 1975:
28 **Բոգդան Վերդեան**, Ծաղիկներս մնացին հեռում, Երեւան, 1969:

ու ասում. - Դրամապուրգ չունենք: Միակը Սպեփանն է: Ասում ու **սեղմում ոպքս, որ ես իր յայտնած կարծիքը հալած իւղի պեղ չընդունեմ**»[29]: «Վախենում էինք մեզ մօտ եղած գումարը չբաւականացնէր... Այդպիսի շռայլ ընթրիք մենք նկատի չէինք ունեցել: Թաթուլն անընդհատ **սեղմում էր ոտքս**: Բարեբախտաբար, Չարենցը մի քանի րոպէով դուրս գնաց: -Պէտք է մի տեղից փող գտնել, - ասաց Թաթուլը»[30]: Բառակապակցութիւնների մեծ մասում նշում են շարժոյթի կատարման զանազան մանրամասնութիւններ: «Սրապիոն Միսակիչը անհանգստութիւն ցուցաբերեց: Տիկին Վարդուհին **զգուշօրէն ոտքը դրեց նրա ոտքին ու սեղմեց, որ նշանակում էր՝ լռիր**»[31]**:** «Հայկօի գլուխը տաքացել էր: Ժենեան...**կօշիկի ներբանով սեղմում էր կապիտան Սաղաֆեանի ոտները: Կապիտանը կարմրում էր**, աչքունքով հասկացնում, բայց իզուր»[32]:

Ամենից յաճախ մատնանշում է շարժանքը սեղանի տակ կատարելու հանգամանքը, ըստ որում, տակ բաղադրիչը ներգոյականից բացի կարող է լինել միւս բոլոր յոլովներով: «Մեզ հետ էր նաեւ Վիտեւսկի անունով մի չէկիստ գնդապետ: .... - Հէնց որ Ստալինը սկսեց շեղուել լենինեան ուղուց, այդ ժամանակուանից էլ... Աճեմեանը ահով, յանդիմանանքով լի աչքերը հառեց Մահարուն, եւ զգացի, որ **սեղանի տակ սեղմում է ոտքը**»[33]: «Թորոն իրենն առաւ, տնքաց... Օսկանը **սեղանի տակից կամացուկ Ուստայի ոտքը սեղմեց**, Ուստան ուշք չդարձրեց: ... **Օսկանը սեղանի տակից կամացուկ Ուստայի ոտքը սեղմեց, այս անգամ աւելի ամուր, Ուստան զգաստացաւ».** - Խնամի Թորո, խօսք է, ասինք, ներող եղիր»[34]: «...Մինչ այդ ասում էին, թէ քնելուց առաջ ոչինչ չեն ուզում ուտել: Ջոհրակը **սեղանի տակով սեղմեց քրոջ ոտքը: Նազելին իսկոյն իրեն գտաւ**: - Ես կատակ եմ անում...»[35]:

Սեղան կամ շարժասումն (ժեստիկուլեացիային դիմելը) աննկատ դարձնելու այլ պարագայ չլինելու դէպքում, մանաւանդ, երբ հաղորդակցուողները կանգնած են եւ իրար մօտ են, այս ենթախմբից նպատակայարմար է գործածել թեւը սեղմել շարժոյթը: Վերջինս ունի չորս տարբերակ: Ելնելով պահի յարմարութիւնից ու հասցէատիրոջ դիրքից՝ շարժասողը սեղմում է նրա դաստակը, բազուկը, արմունկը կամ ուսը: Թեւը սեղմել յարադրութիւնը մնում է իբրեւ շարժոյթի ընդհանուր, չտարբերակուած անուանում կամ, եւ աւելի յաճախ, նշանակում է բազուկը սեղմել: Ինչպէս. «Այ տղայ, մի վատ բան է անցնում մտքովս, - քթի տակ ծիծաղելով, Ալազանին ձեռ առնելով, իմ **թեւը սեղմելով**՝ աւելացնում է նա: - Վայ թէ Մարօն գրում է, դու քո ստորագրութեամբ տպում ես, թէ չէ ինչո՞վ բացատրել քո խելագար սերը: - Սիրելի Չարէնց, այդ չէ...»[36]: «Գուսանը չհամբերեց եւ հարցրեց. - Անուշդ ո՞ր է, չե՞ն գայ տեսութեան: Մեխակը խրատող հայացքով նայեց երգչին, իսկ Արտաշէսը **սեղմեց նրա թեւը՝ ուրիշ բան խօսի**... Ու Շերամը փոխեց զրոյցի նիւթը»[37]: Բայց. «Դիրեկտորը նրան տեսնելով՝ մօտ եկաւ... **նրա արմունկը սեղմելով** ու ուրիշ շարժումներով աշխատեց հաս-

29 **Ռուբէն Զարեան**, Յուշապատում, Երեւան, 1975:
30 «Յուշեր Եղիշէ Չարենցի մասին», Երեւան, 1986:
31 **Վլադիմիր Յարութիւնեան**, Արեւադարձ, Երեւան, 1977:
32 **Քրիստափոր Թափալցեան**, Ոսկէ հովիտ, 1955:
33 **Վահագն Դաւթեան**, Անխորագիր, Երեւան, 2003:
34 **Աւետիք Իսահակեան**, Ուստա Կարօ, Երեւան, հ. 4, 1975:
35 **Անահիտ Սեկոյեան**, Եթե Որոտանը խօսէր, Երեւան, 1970:
36 «Յուշեր Եղիշէ Չարէնցի մասին», Երեւան, 1986:
37 **Վազգէն Տալեան**, Շերամ, Երեւան, 1986:

կացնել, որ նա իր ուշադրությունը պէտք է կենտրոնացնի միայն իր վրայ, ինքն է երեւոյթի պատասխանատուն»[38]: «Նրա ասածներն այնքան անակնկալ էին, որ զարմացան ոչ միայն Զաքարիան ու նրա պառաը... Գեւորգը ժպտաց քթի տակ ու **աննկատելի սեղմեց իր մօտ նստած Յակոբի արմունկը**: Նա սաստիկ շառագունել էր»[39]: «Պապ,- կամացուկ դիմեց պատանին,- կառքը հեռացնենք ապահով տեղ, նորից կյայտնուի ոստիկանը: Պատասխանի փոխարէն Արբակ ծերունին **սեղմեց Ներսէսի ուսը**»[40]:

Ենթախմբի վերջին՝ ամենից ներգործուն շարժոյթն է՝ կշմտել: Այն է՝ մատների ծայրերով մարմնի որեւէ փափուկ մասը ՝ սեղմել-ճմլել: Այս շարժանքն ունի մէկ այլ իմաստ եւս՝ խիստ հաւանելով մէկին սիրալիրութիւն, քնքշանք արտայայտել, որի դէպքում կատարում է մեղմօրէն, զգոյշ: Ծածուկ իրազեկում հաղորդելու համար սովորաբար կատարում է սաստկութեամբ, ցաւ պատճառելով, քանի որ վերաբերում է այն դէպքերին, երբ զգուշացումն արտայայտում է հասցէատիրոջ գործողութիւնների նկատմամբ բարկութեամբ, կամ հարկ է լինում շեղել նրան տիրապետած հոգեվիճակից՝ ուշադրութիւնը կենտրոնացնելու անհրաժեշտ պարագայի վրայ: Ի տարբերութիւն նախորդների, այս շարժոյթն արտացոլուած է առաւելապէս ոչ թէ բառակապակցութիւնների, այլ ինքնուրոյն, անկախ բառերի միջոցով: Բայերից են. կզմթել, կժմթել, կճմթել, կմշտել, կսմթել, կսմռթել, կսմտել, կճմթել, ճմկտել, սմնել: «Մկրտիչ.- Այ կնիկ, ինչ ծովափ, ռեհիզիա, ռեհիզիա... կոմպոզիտոր ջան, յեպամնաց կին է, կարծում է, թէ ռեհիզիան ու ծովափը մէկ են... (հայացքով սաստելով **ճմթում է կնոջը**): Հասկացա՞ր: Սիրուն (ամուսնու ականջին). - կապտեցրիր, է, սարի արջ: Բա չհասկացա՞»[41]: «Երբ ինքը՝ Երանուհին էլ էր ծիծաղում, Գայիանէն քաշում էր նրա փեշից, **կսմթում, զգուշացնելով, որ լուռ մնայ**: Երանուհին լռում էր»[42]: Ունենք նաեւ գոյականային բառեր. կժմռտոց, կճմռթոց, կշմտոց, կսմիթ, կսմթ(տ)ոց, կսմթ(տ)ուք, ճմկիթ:

Իրազեկման համար այս կերպ հնարաւոր է ներգործել մարմնի ամենատարբեր մասերի վրայ, բայց ներկայ իմաստի համար մենք կը նշենք շարժանքի հիմնական, տարածուած չորս տարբերակներ, որոնք են. **կշմտել մէկի ագդրը, թեւը, կողքը, մէջքը**: Մարմնամասի շարժանքի արտացոլումը լեզուում դառնում է բառակապակցութեամբ եւ որոշակի, միջդեռ ինքնուրոյն բառերը՝ միայն ընդհանուր անուանումներ են: «Յանկանում էր ինչ-որ բան ասել, բայց կինը **նրա թեւը կսմթեց**»[43]: «Արամ Ռշտունին յաճախ էր մտաբերում Սիրանոյշի Մագդան: ... Տեսնում էին նրա... աչքերը, լսում ճիչը, քարանում, մինչ մեծ դերասանուհին կը մօտենար ում հարկն է, **թաքուն կը կսմթեր դերակատարի թեւը**, նրան ուշքի բերելու համար, - խօսքդ ըսէ, ծօ՛»[44]: «Յովսէփը Սոնայի դաստակին կապեց մի ընտիր ժամացոյց: Աւետիքը չէր հաւատում աչքերին: **Երբ նրա ագդրը ճմթեց Սաթօն, որ նշան էր այն բանի, թէ տեսա՞ր**, Աւետիքը ժպտաց»[45]: «Ազապ-բաշին ականջի տակ ինչ-որ բան փսփսաց... Աւելի էր սաստկանում հեկեկոցը: Ազապ-բաշին տեսաւ, որ չի կարողանում բան հասկացնել,

38 **Զօրայր Խալատեան**, Ծնծղայ, Երեւան, 1985:
39 **Սերօ Խանզադեան**, Պատմուածքներ, Երեւան, 1957:
40 **Ռոբերտ Կարայեան**, Փրկութիւն, Երեւան, 1983:
41 **Գէորգ Գէորգեան**, Կապոյտ ձիաւորը, Երեւան, 1985:
42 **Վահան Գրիգորեան**, Հարազատ տուն, Երեւան, 1982:
43 **Քրիստափոր Թափալցեան**, Հայրենաշէն, Երեւան, հ.1, 1963:
44 **Գէորգ Արաքեան**, Երկու դիմանկար, Ասեա Բերոյեան, Արամ Ռշտունի, Երեւան, 1990:
45 **Քրիստափոր Թափալցեան**, Կեանքի արշալոյսը, Երեւան, 1957:

թաքուն կամթեց փեսացուի մէջքը, Սեթը ցաւից ուշքի եկաւ, անճարակ ժպիտով շուրջը նայեց»[46]: «Էդ գերազանցները ի՞նքն է սպացել, թէ՞ ձեր վարիչն է նշանակել: -Սպացել եմ՝ նշանակել է,- ասացի ես: - Սրս,- հայրս **կամթեց մէջքս**»[47]:

բ. ***Հարուածում***: Այս ենթախմբի հոմանիշների համար ընդհանուրն այն է, որ ծածուկ իրազեկումը հաղորդելու նպատակով շարժասողը թեթեւակի խփում կամ դիպչում է հաղորդակցին: Ըստ էութեան դիպչելն այլ բան չէ, քան թեթեւակի հարուածելը: Ներկայ դէպքում, շարժասական իմաստի առումով, այս երկու շարժումների միջեւ տարբերութիւն չկայ: Տարբերութիւնն առաջանում է շարժոյթների կատարման սաստկութեան տեսակէտից. դիպչելը՝ մեղմ, թոյլ ատիճանն է, խփելը՝ ուժեղ, աւելի ներգործուն ատիճանը: Շարժանքները երկուսն են, որովհետեւ ընդունուած է գործադրել ձեռքը կամ արմունկը: Ձեռքով մէկին խփել (դիպչել), շարժոյթը գործնականում, թերեւս, ունենայ շատ տարբերակներ, կախուած այն բանից, թէ հաղորդակցի ո՞ր մարմնամասի հետ է շփումը, սակայն հիմնականը՝ սովորականը, հինգն են. խփել (դիպչել) հացէատիրոջ թեւին, կողքին, մէջքին, միմեանց մօտ նստած լինելու դէպքում՝ սեղանի տակ՝ ծնկին, ազդրին: Այս հինգից, ինչ խօսք, ամենից յարմարն ու տարածուածն է առաջինը:

Իւրաքանչիւր տարբերակ կարելի է կատարել երեք ենթատարբերակով՝ ձեռքի ափով, ձեռքի երեսով, մատների ծայրերով: Շարժանքի մէկանգամեայ կատարման համար ձեռքի ափով կամ երեսով բաւական է խփել (դիպչել) հաղորդակցին մէկ անգամ, իսկ մատների ծայրերով թփթփացնել (թոյլ ատիճանի դէպքում՝ մէկ մատով կտկտացնել) երկուսից-չորս անգամ, սովորական է՝ երեք անգամ: Այժմ բերենք օրինակներ: «Նրանք ճաշարանում նստում էին կողք-կողքի: -Կարծես, դու ձու չես սիրում, ասաց Մանիկը: - Չէ, սիրում եմ, - փորձեց հակառակուել Յասմիկը: Նա դեռ չգիտէր Մանիկին: ... **Սեղանի տակ Սեղան թեթեւ կպաւ Յասմիկի ծնկին**... Մանիկը իրենց դոչիներից է, նա շատ ուժեղ է»[48]: «Սեղանի տակ **ձեռքով խփեց ամուսնու ազդրին, հասկացնելով, թէ՝ էլ մի խմիր**» բաւական է (առօրեայից): «Նապաշան կուշտ ծիծաղեց, **դիպաւ Ռաֆայէլի թեւին ու հասկացրեց**, իրեն շատ լաւ յայտնի է, որ Ռաֆայէլը հետաքրքրւում է ոչ թէ Անահիտին գործի դնելու խնդրով, այլ Անահիտի անձով»[49]: «**Մատների ծայրով թփթփացրեց կնոջ թեւին** ու սկսեց կեղծ բարկանալ երեխայի վրայ» (առօրեայից):

Արմունկին դիմելիս՝ շարժասողն ազդում է հաղորդակցի թեւի կամ կողքի վրայ, որով ունենում ենք երկու տարբերակ: Շարժոյթն արտացոլող բառային միաւորներում կայ մի քանի ինքնուրոյն բառ՝ արմնկահարել, արմնկել. միւսները բառակապակցական կառոյցներ են: Համեմատաբար գործածութեան պակաս յաճախականութիւն ունի արմունկով դիպչել կատարման թոյլ ատիճանը: Օրինակ. «Երիտասարդը մի ոչնչացնող հայացք նետեց ծերունուն,-բանտապետի պէս է պահում իրեն: Ամիրշախեանն **արմունկով թաքուն դիպաւ փեսային**: Լուսիկը այս ես չնկատելու տուեց»[50]:

Շատ ավելի յաճախ է հանդիպում արմունկով խփել (զարկել) կատարման միջին ատի-

46 **Զարգանդ Դարեան,** Արծիւ Վասպուրականի, Երեւան, 1988:
47 **Հրանտ Մաթեւոսեան,** Օգոստոս, Երեւան, 1967:
48 **Դոնարա Ղարագեոզեան**, Մանկութեան գորգը, Երեւան, 1984:
49 **Համլետակ Սիրաս,** ԵԺ 3 հատորով, Անահիտ, Երեւան, հ. 2, 1959:
50 **Անժելա Ստեփանեան**, Մրմոր, Երեւան, 1982:

ճանը: «Հայրը ճանապարհին հարցրեց, թէ ինչո՞ւ է նա տխուր: Վահէն ասաց, որ տխուր չէ: **Կինն արմունկով խփեց ամուսնու թեւին, իբր թող**, մի խօսեցրու, ոչինչ»[51]: «Այս տեղացուն աչքով-ունքով արին, **արմունկով խփեցին**, բայց մարդը եռում էր, շատ էր վիրաւորուած»[52]: «Մուկ Լեւոն, մեզի թռուցիկ մը կը շինե՞ս... Խաչիկ **արմունկով զարկաւ կուշտիս**: Անմիջապէս հասկացայ: Սկսած էի ձախաւեր առաջաբանով մը: Արդարեւ, ներելի՞ էր մուկ կոչել մէկի, որմէ կախուած էր մեր ձեռնարկին յաջողութիւնը»[53]: Այստեղ հանդիպում է մէկ-երկու գոյականային բառակապակցութիւն՝ արմունկի հարուած: «Չտեսնուած համով էր... **կուշտիս արմունկի ուժգին հարուած մը**: Միհրան Հերարտեանն է: Բոլորը ոտքի ելած են շէյխին օրինակով: Մինչ ես դեռ նստած կմնամ: Վերջացուց՝ մենք պէտք է վերջացնենք»[54]: «Հայրիկի հետ մեր փոխանակած **արմունկի հարուածները նշանակում էին**, թէ քոյրերը եկան»[55]: Այս շարժանքի կատարման մի երրորդ դէպքում շարժասողն արմունկով սեղմում, ճնշում է հաղորդակցի թեւը կամ կողքը, որ դարձեալ յաճախ գործածական է: Արտայայտւում է յետեւեալ բայերով, հրել, մշտել, բզել, բրթել, խթել, հրմշտել, սեղմել,: Ինչպէս. «Գէորգ-Ասա, շուտ, ո՞ւր է այն աղջիկը: -Արտեմ- էնտի օթախումն է. միր ախչիկ պառունը, աղայ: Կարապետ - (աջ **արմունկով խփում է** Արտեմին)»[56]: «Երբ նրանք մեզ նկատեցին, **արմունկներով իրար մշտեցին**, ինչ-որ ձեռագործով էին զբաղուած, միասին վեր կացան եւ դանդաղ քայլերով մօտեցան մեզ»[57]: «Շրջապատել էին Արշակին ու Վաղարշակին: Լուսիկն իսկոյն հասկացաւ, թէ բանն ինչումն է, եւ **արմունկով հրեց ընկերուհուն**, որ հաւաքի իրեն: Գայիանէն ծիծաղը զսպելու համար ատամներով սեղմեց շրթունքը»[58]: «Միջօն՝ իր Քերականին պատկերներով զբաղուած՝ բնաւ չնկատեց, որ վարժապետը իր հետ կը խօսէր, մինչեւ որ իր մօտի աշակերտները **հրմշտեցին արմունկներով**»[59]: Այս երրորդ դէպքը, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, ինչ-որ չափով յարում է յաջորդ ենթախմբի շարժոյթների կատարման եղանակին: Մի քանի բայական բառային միաւորումներում՝ արմնկել, արմունկով նշանացի անել, արմունկով նշան տալ կոնկրետ չի նշում շարժանքի կատարման սաստկութեան աստիճանը, տարբերակը կամ ենթատարբերակը, այլ ընդհանուր կերպով անուանելով՝ միայն մատնանշում է շարժանքը: Ինչպէս. «Դեռ վերջին խօսքերը չէի արտասանել, երբ **փեսան արմունկով նշանացի արեց, որ լռեմ**: Այդ միջոցին մի ատուեր անցաւ մեր մօտից:

- Ինչ կայ, - հարցրի ես կամացուկ ձայնով»[60]:

գ. ***Դում***: Այս ենթախմբում շարժոյթները դարձեալ երկուսն են: Դրանցից առաջինը կատարելիս հաղորդակցուողները նստած դիրքում են, իրար մօտ: Ծածուկ իրազեկում հաղորդողը հրում է հասցէատիրոջ ծունկը, կամ, այլ կերպ, բոթում է ծունկը, եւ կամ՝ խթում է

51 **Զորայր Խալափեան**, Քառատակտ շարժիչ, Երեւան, 1985:
52 **Զորայր Խալափեան**, Որտե՞ղ էիր մարդ ասածոյ, Երեւան, 1983:
53 **Անդրանիկ Ծառուկեան**, Մանկութիւն չունեցող մարդիկ, Երեւան, 1963:
54 Նոյնը:
55 **Անրի Վերնոյ**, Մայրիկ, Երեւան, 1989:
56 **Գաբրիէլ Սունդուկեան**, Խաթաբալա, Երեւան, 1980:
57 **Գուրգէն Մահարի**, Երիտասարդութեան սեմին, Երեւան, 1956:
58 **Ազատ Շահինեան**, Թատրոնը սառոյցի վրայ, Երեւան, 1962:
59 **Համասրեղ**, Հայաստանի լեռներու սրնգահարը, Միջօ, Երեւան, 1989:
60 **Մուրացան**, ԵԺ 3 հատորով, Իմ կաթոլիկ հարսնացուն, Երեւան, հ.1, 1975:

ծնկին: Գործածության յաճախականությամբ այս շարժանքը անհամեմատ գիջում է յաջորդին եւ ներկայ իմաստով էլ գեղարուեստական գրականության մէջ քիչ է արտացոլուած: Ինչպէս. «Ես **հրում եմ Ռուբիկի ծունկը, որ վեր կենանք**: Երեմն ասում է.

- Նստեցէք, ո՞ւր էք գնում, նստէք, զրուցենք»[61]: «Սեղանի տակ **բոթեց կնոջ ծունկը, որ փոխի խօսակցութեան թեման**. տանտէրերի համար պատահածի մասին յիշելն անախորժ է: Կինը հասկացաւ ամուսնուն ու խնդրեց մատուցուող խմորեղէնի բաղադրատոմսը» (առօրեայից):

Հաջորդ շարժոյթին դիմելիս իրազեկողը հրում է հաղորդակցի թեւը, կամ կողքը (կողը), եւ կամ մէջքը (կոնակը): Այս մարմնամասերն են համեմատաբար յարմար անկապ շարժասելու առումով եւ, միմեանց յարակից լինելով, դիտւում են միեւնոյն շարժոյթի շրջանակներում, որով ունենում ենք երեք տարբերակ: Ծածուկ իրազեկման նպատակով միւս մարմնամասերը հրել կամ ընդունուած չէ (առանձին դէպքերն անտեսում ենք կարծրատիպեր չդառնալու պատճառով) եւ կամ խիստ տարբեր են տեղով ու կատարման եղանակով, ուստի, ինչպէս տեսանք, ուրիշ, ինքնուրոյն շարժոյթներ են (հմմտ. **ծունկը հրել, արմունկով հրել**): Թեւը, կողքը, մէջքը ընդունուած է հրել չորս կերպ՝ ձեռքի ափով, չորս մատների ծայրերով, ցուցամատով, բթամատով: Այսպիսով, ունենում ենք չորս հիմնական ենթատարբերակ: Շարժանքի գործածության յաճախականութիւնը մեծ է, եւ իր բազմազանությամբ արտացոլուած է հայոց լեզուում: Նախ, կան բայեր, որոնք շարժոյթի անուանումներն են ընդհանրապէս՝ առանց տարբերակների կամ ենթատարբերակների մատնանշման: Այսինքն՝ բզել, բոթբոթել, բոթբթել, բրթել, բոթել, դրդել, բշտել, հրել, հրմշտել, մխտ(թ)ել, մշտել: Ինչպէս. «Փողոցում կանգնեցրեց.

-Ինչ ես քիթդ կախել: Գնանք՝ գարեջուր խմեցնեմ:

....Տարաւ զօռով, հետս էլ Վ. Միրզոյեանին եւ Մ. Ասանամեանին, որոնք **գաղտնի բզում էին ինձ, որ չհրաժարուեմ**»[62]: «Մոտիկ նստածներից մի քանիսը, Արշակի ակնարկները լսելով, **իրար բոթբթում** ու սկսում են ծիծաղել»[63]: «Զարթիաներ առաջացան դէպի մեզ: Նրանցից մէկը ակնդէտ նայում էր քեռի Պետրոին: Վերջինս, յանկարծ նկատելով նրան, **կամաց բոթեց Միրոին**, եւ երկու ֆիդայիները, մտնելով բազմութեան մէջ, ձուլուեցին նրան»[64]: «Այնքան եմ ճարել, որ և՛ ես եմ կերել, և՛ մի քանի չքաւոր ընկերների եմ կշտացրել: (Էսպես ժողովականները ... **իրար հրեցին**, ո՞վ էր իրանց միջից այն մարդը, որ Խոսրովեանցի սեփական գրպանից նպաստ էր սպացել)»[65]: «**Ծուշան մշտեց** Նարօն: ... Սպասեց, որ խօսք բանայ հարսիկին, իրենց մտքինը ըսէ... - Հարսիկ, - ըսաւ Նարօն, - քեզի բան մը պիտի ըսեմ...»[66]: Բառակապակցական կառոյցներում, ի տարբերութիւն քիչ վերը յիշատակուած ինքնուրոյն բառերի, մատնանշւում է, թէ ինչպէս է կատարւում շարժոյթը, այսինքն՝ ո՞ր տարբերակն է եւ ո՞ր մարմնամասը՝ ձեռքով բոթել, ցուցամատով հրել, ձեռքով կողքը հրել: «Այս էլ քոնն է, գումարը 220 ռուբլի է,- ասաց Աթանէսը,- արի, որդի, այս փողերով Մարիամի

61 **Հրաչեայ Յովհաննիսեան**, Ոսկէ ամպ, Երեւան, 1984:
62 **Պահարէ**, Թատերական յուշեր, Երեւան, 1960:
63 **Բաղդասար Թովիկ**, Արշալոյսից առաջ (Յուշապատում), Երեւան, 1979:
64 Նոյնը:
65 **Պերճ Պռոշեան**, Պատմուածքներ, Երեւան, 1954::
66 **Յակոբ Մնձուրի**, Կապոյտ լոյս, Երեւան, 1986:

հարսանիքը կատարենք,- փորձեց նա իր որդու սէրը դէպի սեփականութիւնը, **ձեռով բոթելով կնոջը**: - Այո, որդի, - մէջ մտաւ Գիլումը»[67]: «Արքաւազդը դիմեց Շողիկին.- Ինչո՞ւ չէք պատասխանում: - Իրր թէ իմ կարծիքը ձեզ համար կարեւոր է,- ուզեց հեգնել աղջիկը: Էմման **թեթեւակի հրեց նրա թեւը**: Շողիկը, միայն նրա համար նկատելի, դէմքը ծամածռեց»[68]: «Գաբրիէլը ... հարց տուեց.- Իսկ ինձ հետ ինչո՞ւ էք ֆրանսերէն խօսում: ... Հրանտ Ոսկանեանը կատաղած **բզեց ընկերոջ մէջքը, կարծես ուզում էր ասել.** տեսնո՞ւմ ես, պարծենկոտութեամբ ամեն ինչ փչացրիր»[69]: Նկատելի է, որ բառակապակցական կառոյցների մեծ մասի կազմի մէջ, դրուած ուղղական կամ տրական յոլովով, մտնում է կողք բաղադրիչը: Սա ցոյց է տալիս, որ գործնականում աւելի տարածուած է դիմել կողք-ի տարբերակին՝ կողքը բշտել, կողքը թթել, կողքը բոթել, կողքը խթել, կողքը հրել, կողքը մշտել, ցուցամատով կողքը մխթել (մխտել), ձեռքով կողքը հրել, ապա նաեւ. կողքին բզել, կողքին բոթել, կողքին բրթել, կողքին հրել, կողքին մխթել (մխտել), կողքին մշտել: Ըստ որում, հանդէս է գալիս նաեւ կող բառային տարբերակը: Օրինակներ. «Ղազար, որդի, կամ Վահանին պիտի տանես Մոսկվայ, կամ տանը մնաս, ... արտերը հնձես ժամանակին: Վահանը **կողս է բզում**, որ Մոսկվա գնալը յանձն առնեմ, գիտէր, որ ես աւելի շռայլ եմ ծախսերի մէջ»[70]: «Հետաքրքիր է ծերունու խօսքը: Ընկերներս կլանուած լսում են, իսկ ես կամացուկ շշնջում եմ Վռամի ականջին: Վռամը **բոթում** է **կողս**, իսկ Յակոբը խեթում է հայացքով»[71]: «Մենք հարսի **կողքին էլ թաքուն բոթում ա, թէ՝ պրծի, վերջացրու**, ... **կէս քշեր դառաւ**»[72]: «Շարժանկարին սրահին մէջ, երբ լոյսերը մարեցան, **Արշակ մխտեց կողքիս: Գիտէի, թէ ինչ հասկցնել կ'ուզէր**: Մութը որքան բարենպաստ է, քովդ նստած աղջիկը նուաճելու համար»[73]:

դ. ***Զգում***: Ծածուկ իրազեկումը հաղորդելու համար ընդունուած է ձգել հաղորդակցի թեւը կամ հագուստի ծայրը: Այս եղանակների հիման վրայ առաջ են եկել մի-մի շարժոյթ: Առաջինը կատարւում է երկու տարբերակով՝ բռնելով բազուկը կամ ձեռքը; Արտացոլող բառակապակցութիւններում գործողութիւնը ցոյց է տալիս ձգել, ձիգ տալ, քաշել բայերը: Գոյականային, թեւ, կուռ, ձեռք բաղադրիչները դրւում են ուղղական կան բացառական յոլովով: Ուղղականով ձեւեր՝ թեւը ձգել (ձիգ տալ), թեւը քաշել, կուռը ձգել (ձիգ տալ), կուռը քաշել, ձեռքը ձգել (ձիգ տալ), ձեռքը քաշել: Օրինակներ. «Զեւաւորումը յանձնուեց Յակոբ Կոջոյեանին: Եղանք նկարչի արուեստանոցում: Կոջոյեանն ասաց, թէ դեռ բան չի արել: ... Իմանալով Նաիրու բնաւորութիւնը՝ **թեւը քաշեցի եւ հասկացրի, որ ձայն չհանի**»[74]: «Մայորը գնաց դէպի աւտոմեքենան: Ջոկապավարը թուքը կուլ տուեց. միւս երկու պիոներները **ձգեցին նրա թեւը, այսինքն թէ՝ շուտ արա»[75]:** Բացառականով ձեւեր՝ թեւից ձգել (ձիգ տալ), թեւից քաշել, կռնից ձգել (ձիգ տալ), կռնից քաշել, ձեռքից ձգել (ձիգ տալ), ձեռքից քաշել: Օրի-

67 **Շիրվանզադէ,** ԵԺ 10 հատորով, Վարդան Ահրոնեան, Երեւան, հ. 3, 1959:
68 **Անժելա Ստեփանեան**, Քոյրեր, Երեւան, 1947:
69 **Ֆրանց Վերֆել**, Մուսայ լեռան 40 օրը, Երեւան, 1964:
70 «Վահան Տէրեանը ժամանակակիցների յուշերում», Երեւան, 1964:
71 **Գեւորգ Դեւրիկեան**, Մաքսում, Երեւան, 1980:
72 **Պերճ Պռոշեան**, ԵԺ 3 հատորով, Սօս եւ Վարդիթեր, Երեւան, հ.1, 1953:
73 **Մուշեղ Իշխան**, Երկեր, Սպասում, Երեւան, 1990:
74 **Ռուբէն Զարեան**, Յուշապատում, Երեւան, 1975:
75 **Վազգեն Տալեան**, Մինչեւ լուսաբաց, Երեւան, 1987:

նակ. «Ղուկասը բարի գիշեր է ասում գողերքին, բայց **աննկատելիօրէն քաշում է թեւից**, երեւի, իսկապէս որ փորացաւ ունի: Առանց այն էլ ես մտածում եմ ուղեկցել ընկերոջս...»[76]:

Երկրորդ՝ հագուստի ծայրը ձգել շարժոյթը եւս ունի երկու հիմնական, ընդհանուր տարածում ունեցող տարբերակ՝ **թեւը ձգել եւ փէշը ձգել**: Անշուշտ, կարող են լինել նաեւ ուրիշ, ոչ քիչ հանդիպող, երկրորդական տարբերակներ: Նոյն ձգել, ձիգ տալ, քաշել, բայերի հետ այս դէպքում հանդէս են գալիս **թեւք, փէշ** գոյականային բաղադրիչները՝ դարձեալ ուղղական կամ բացառական յոլովներով: Օրինակներ. «Հինգ ժամ է, կը խմէք, էդ կենաց չպրծա՞ւ: Ուսնկիցը **քաշում է Ներսէի փէշը** եւ աչք-ունքով հասկացնում, որ անյարմար է, մարդը խօսում է»[77]: «Նրանց վէճն սկզբում թում է վերացական, անհեթաքրքիր: Սամսոնը **փէշս քաշում է, գնանք**: Բայց Տիգրանն այդ նկատելով, **ձիգ է տալիս մեր թեւքերից՝ սպասէք**»[78]: «Համօն **աննկատ ձգեց Գուգօի թեւքից: Գուգօն, ըստ պայմանի**, միանգամից խղճալի տեսք ընդունեց»[79]: «Սեթը լալիս էր... Ազապ-բաշին մի քանի անգամ **ձգեց նրա չուխայի փէշից**...»[80]: «Երկրորդ օպոնէնտս խստօրէն քննադատեց... Մոտեցայ ամբիոնին: Աճառեանը, որ նստած էր հէնց առաջին շարքի ծայրին, **շինելիս փէշից քաշեց**: Թեքուեցի դէպի նա: - Կապակով պատասխանիր, ծիծաղը ամենից հատու զէնքն է»[81]: Կան կառոյցներ, որոնց կազմի մէջ մտնում են հագուստ, հագուստի ծայր, վերնահանդերձ կամ որոշակի հագուստի անուանումով բաղադրիչներ՝ հագուստի ծայրը քաշել, հագուստից քաշել, վերնահանդերձի ծայրը ձիգ տալ, տաբատի ծայրը ձգել եւ այլն: Ինչպէս. «Ինչի՞ են ձեզ բերել էստէղ: - Եթէ գիտէք, մեզի ըսէք, -ըսի ցուրտ: Ներսիսեանցին **քաշեց թիկնոցիս ծայրէն, երեւի ըսել կ'ուզէր**, որ քաղաքաւարութեամբ պատասխանեմ»[82]:

Մինչ այժմ մենք կանգ առանք ներկայ շարքի հոմանիշների առանձին-առանձին գործածութեան վրայ: Սակայն տարբեր պատճառներով, միեւնոյն նպատակով, շարժառիթին հարկ է լինում նաեւ դիմել դրանցից մի քանիսին՝ կատարելով միաժամանակ կամ յաջորդաբար: Եթէ որեւէ շարժոյթով միտքը հաղորդելն արդիւնաւէտ չէ, հաղորդակիցը չի ընկալում կամ ուշադրութիւն չի դարձնում, պահանջ է առաջանում դիմելու ավելի ներգործուն հոմանիշների: Հեռուից, դիմախաղի իրագեկումը պակաս ուշադրութիւն գրաւող եղանակ է, մինչդեռ անմիջական շփումը առաւել ազդեցիկ է: Վերջիններիս մէջ էլ թեւքից քաշելը, ծունկը հրելը համեմատաբար քիչ ներգործուն են, մինչդեռ ոտքը սեղմելը, կմշտելը անմիջապէս զգաստացնում են հաղորդակցին: Ստ. Զօրեանի «Ամիրեանների ընտանիքը» վէպի յետեւեալ դրուագում Զարօն ցանկանում է ժամանակին լռեցնել տատին, փոխել խօսակցութիւնը, հարկադրուած է լինում դիմելու նախ մէկ, ապա ուրիշ եղանակի: «Զարօն մի քանի անգամ **աչքով-ունքով արաւ տատին**, յետոյ, նրա կողքին նստելով, **փէշը քաշեց**»: Անահիտ Սահինեանի «Կարօտ» վէպում միեւնոյն միտքը հասկացնելու համար գործածում է երեք

76 **Յարութիւն Մկրտչեան**, Անյայտ զինուորի յիշատակարանը, Երեւան, 1960:
77 **Մուշեղ Գալշոյեան**, Մարութա սարի ամպերը, Ներսէ, Երեւան, 1983:
78 **Ստեփան Զօրեան**, ԵԺ 12 հատորով, Մի կեանքի պատմութիւն, հ. 3, Երեւան, 1979:
79 **Ազապ Շահինեան**, Թատրոնը սառոյցի վրայ, Երեւան, 1962:
80 **Զարգանդ Դարեան**, Արծիւ Վասպուրականի, Երեւան, 1988:
81 **Գառնիկ Ստեփանեան**, Աճառեանի հետ, Երեւան, 1976:
82 **Վազգէն Շուշանեան**, Երկիր յիշատակաց, Երեւան, 1966:

շարժասական հոմանիշ. «Տնքալով տեղից բարձրացաւ Սուրենի մայրը: **Մայրը նրա ոտքը տրորեց, փէշը քաշեց, աչքով-ունքով հասկացրեց՝ թէ դու մնայ**...»:

Որքան մեծ է անհանգստութիւնը, այնքան փոփոխակի են հոմանիշները, ընտրւում են որքան հնարաւոր է աւելի սաստկական բնոյթ ունեցողները: Այսպէս է, ահա, Սասուն Վարդանեանի «Գիւղական պատկերներում», ուր մի հատուածում հարկ է լինում դարձեալ ժամանակին լռեցնել, կանխելու համար ակնկալիք անահորժութիւնը: «Իզուր էր մայրս անհանգստանում: Իզուր էր փորձում **աչք-ունքով, թաքուն մշտելով, կսմթելով մեզ լռեցնել**: Նա շատ էր վախենում Բաբուլի ծռութիւնից...»:

Եւ այսպէս, մենք քննութեան առանք ծածուկ իրազեկման շարժասական հոմանիշային շարքը: Այն բաժանեցինք երկու խմբի: Մի խմբի շարժոյթները կատարւում էին որոշակի տարածութիւնից եւ դիմահաղեր էին, իսկ միւսինը՝ հաղորդակցուողների անմիջական շփման միջոցով եւ բոլորն էլ շարժանքներ էին: Վերջիններիս դէպքում գործածւում էին յետեւեալ եղանակները՝ սեղմում, հարուածում, հրում, ձգում: Հոմանիշների ընտրութիւնը կախուած էր այն բանից, թէ տուեալ իրավիճակում դրանք որքան են ներգործուն կամ որքան աննկատելի: Ծածուկ իրազեկումը հասցէագրւում է կամ ներկաներից առանձնացրած որոշակի հաղորդակցի, կամ բոլորին դիմելիս՝ հաղորդուող նիւթի մի մասը ներկայացնում է իբրեւ ենթատեքստ՝ բարձրաձայն չասուած մի բան, գաղտնիք: Անշուշտ, ծածուկ իրազեկում հաղորդելու համար, աննկատելիութեան պայմանում, դիմում են նաեւ բացայայտ կատարուող, որոշակի իմաստ ունեցող շարժոյթների եւս: Հնարաւոր է տեւականօրէն շարժասութեամբ խօսակցել. ինչպէս մնջախօսութեան ժամանակ տեղի է ունենում ներկաներից մի մասի միջեւ: Սակայն բացայայտ, որոշակի իմաստով շարժոյթների համար այդ կը լինի կիրառութեան սոսկ մի դէպք, ոչ բնորոշիչ դրսեւորում: Նոյն կերպ՝ միայն իրար լսելի ձայնով շշնջանքը չի նշանակում, թէ գործածուած բառերը նախատեսուած են յատկապէս ծածուկ հաղորդակցուելու համար, այլ այն, որ այդպէս էր նպատակայարմար տուեալ իրավիճակում: Ինչպէս տեսանք, աննկատ կատարուելը, չտարբերակուած, իրադրութեան պահանջով իմաստն արտայայտող ծածուկ իրազեկման շարժոյթների հիմնական ու մշտապէս դրսեւորուող յատկանիշներն են:

Յօդուածում քննութեան առանք տասներկու շարժոյթ: Վերջում բերում ենք դրանց ցանկը, ըստ վերը նշուած խմբերի եւ ենթախմբերի:

Դիմահաղեր՝ **աչքով անել, ունքով անել**:

Շարժանքներ՝ **ազդրը սեղմել, թեւը սեղմել, կմշտել, ոտքով մէկի ոտքը սեղմել, արմնկահարել, մատների ծայրերով մէկի մարմնի որեւէ մասի խփել (դիպչել, թփթփացնել), ծունկը հրել, կողքը (թեւը, մէջքը) հրել, թեւը քաշել, հագուստի ծայրը (փէշը, թեւքը) քաշել**: